ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության. Միասին ընդդեմ գենդերային կարծատիպերի և բռնության



Իրականացման ժամանակահատված: 01.03.2020 - 30.06.2023

ԱԼԳ երկրներ:

ԵՄ ներդրում: € 7 500 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):
UN Women, UNFPA, Niras

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:

Նախագծի կայքէջ: auth-eca.unwomen.org/en/what-we-do/ending-violence-against-women/eu-4-gender-equality

Նախագծի նկարագրություն:
«ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության» ծրագրի ընդհանուր նպատակն է ամրապնդել կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքներն ու հնարավորությունները՝ կանանց ու տղամարդկանց դերերի հանրային ընկալումները փոխելու, գենդերային կարծրատիպերը հաղթահարելու և երեխաների խնամքի ու կենցաղային պարտականությունների իրականացման մեջ տղամարդկանց մասնակցությունը մեծացնելու միջոցով:

Ակնկալվող արդյունքներ:
- Գենդերային կարծրատիպերին մարտահրավեր նետելու լավագույն ուղիների ուսումնասիրություն՝ ավելի լավ հասկանալու համար, թե վարքագծի փոփոխության հասնելու որ մոտեցումներն են առավել հաջող.
- Կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային կարծրատիպերի և խտրական գործելակերպի դեմ պայքարին ուղղված իրազեկման և շահերի պաշտպանության նորարարական արշավների մեկնարկ.
- Դրամաշնորհներ տրամադրում ՔՀԿ-ներին՝ գենդերային կարծրատիպերի դեմ պայքարի միջոցով կանանց համար հնարավորությունների բարելավմանն ուղղված մի շարք հատուկ միջոցառումների իրականացման համար.
- Աշխատանք տեղական առողջապահական հաստատությունների հետ՝ նախածննդյան խնամքի գործընթացում տղամարդկանց ներգրավվածությունն ավելացնելու համար, ինչպես նաև ցանցերի ստեղծում, որտեղ հայրիկները կկարողանան օգուտ քաղել փոխադարձ փոխանակումից.
- Ծնողական արձակուրդի լավագույն պրակտիկաների ներդրման ջատագովություն՝ երեխաների դաստիարակությամբ և խնամքով զբաղվող տղամարդկանց թվի ավելացման համար.
- Հնարավոր հանցագործների հետ աշխատելու վերաբերյալ ուղեցույցի մշակում՝ կանանց նկատմամբ բռնությունը մինչև դրա տեղի ունենալը կանխելու համար.
- Տեխնիկական աջակցության ցուցաբերում կանանց նկատմամբ բռնություն գործադրած անձնաց հետ աշխատող հաստատություններին՝ ապացույցների վրա հիմնված վաղ կանխարգելման նորարարական